ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 25 -Լ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) անչափահասների հետ տարվող ընդհանուր կանխարգելիչ աշխատանքների իրականացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) անչափահասների միջանձնային հարաբերությունների պարզաբանման դեպքերի կանխման աշխատանքների գրանցման մատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության պետին՝ կազմակերպել սույն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված մատյանի տպագրությունը:

3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«09» 12 2024թ.
քաղ. Երևան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի 2024թ. դեկտեմբերի « 09 »
N 25 - Լ հրամանի

ԿԱՐԳ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են անչափահասների կողմից և անչափահասների նկատմամբ կատարվող հանցագործությունների և իրավախախտումների ընդհանուր կանխարգելմանն ուղղված աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Անչափահասների կողմից և անչափահասների նկատմամբ կատարվող հանցագործությունների և իրավախախտումների ընդհանուր կանխարգելման շրջանակներում համայնքային ոստիկանության տարածքային ստորաբաժանման ծառայողը կատարում է հետևյալ աշխատանքները՝

1) կազմակերպում և իրականացնում է երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված տարաբնույթ միջոցառումներ, զրույց-հանդիպումներ, դասընթացներ.

2) իրականացնում է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտմանն ու դասերի ընթացքում դասապրոցեսին չմասնակցող երեխաների հայտնաբերմանն ուղղված աշխատանքներ.

3) իրականացնում է անչափահասների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման կանխարգելման, ինչպես նաև թմրամոլության կանխարգելման համար անհրաժեշտ տեղեկությունների, հմտությունների, գործողությունների վերաբերյալ դասընթացներ ծնողների և մանկավարժական կոլեկտիվների հետ.

4) շահագրգիռ գործընկերների աջակցությամբ նախաձեռնում և անցկացնում է անչափահասներին հանրօգուտ գործունեության, սպորտային և այլ խմբակային խաղերի մեջ ներգրավելու աշխատանքներ.

5) շաբաթական առնվազն երկու անգամ՝ մինչև ուսումնական օրվա ավարտը, կատարում է այցելություններ սպասարկվող տարածքում գործող կրթական հաստատություններ և նվազագույնը 2 ժամ իրականացնում է հանցագործությունների ու իրավախախտումների, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների պարզաբանման նախականխման աշխատանքներ.

6) անհրաժեշտության դեպքում իրականացնում է հանդիպումներ ծնողների և մանկավարժական կոլեկտիվների հետ նաև դասապրոցեսի ավարտից հետո.

7) կատարված աշխատանքները բովանդակալից գրանցում է սույն հրամանի N 2 հավելվածով հաստատված մատյանում: Այդ մատյանում գրանցում է նաև կրթական հաստատությունից դուրս և կրթական հաստատությունում միջանձնային հարաբերությունների պարզաբանման նախականխման աշխատանքները.

8) նախականխման աշխատանքների վերաբերյալ ամբողջական և հաշվառման հիմք չհանդիսացող տեղեկատվությունը 24 ժամվա ընթացքում գրավոր փոխանցում է անչափահասի փաստացի բնակության վայրը սպասարկող համայնքային ոստիկանության տարածքային ստորաբաժանմանը.

9) անչափահասի հետ աշխատանքներ իրականացնելու պարագայում համայնքային ոստիկանության ծառայողն անմիջապես իրազեկում է անչափահասի ծնողին, օրինական ներկայացուցչին կամ այն անձին՝ ում վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, իսկ համայնքային ոստիկանության տարածքային ստորաբաժանում տեղափոխելը կատարում է բացառապես վերը նշված անձանց ուղեկցությամբ կամ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

10) իրականացնում է անչափահասների վրա բացասական ազդեցություն ունեցող անձանց բացահայտման աշխատանքներ.

11) իրականացնում է անչափահասների հնարավոր, այդ թվում՝ քրեածին հավաքատեղիների հայտնաբերման աշխատանքներ.

12) իրականացնում է անչափահասների կողմից իրավախախտումներ կատարելուն նպաստող պատճառների և պայմանների վերլուծություն:

3. Համայնքային ոստիկանության տարածքային ստորաբաժանման ծառայողը կրթական ուսումնական հաստատություններ ներկայանում է միայն համազգեստով:

4. Համայնքային ոստիկանության տարածքային ստորաբաժանման ծառայողը կանխարգելմանն ուղղված աշխատանքները կազմակերպում և իրականացնում է ինչպես անչափահասների, այնպես էլ անչափահասների ծնողների և մանկավարժական անձնակազմի շրջանում:

5. Անչափահասների միջանձնային հարաբերությունների պարզաբանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվում է սույն հրամանի N 2 հավելվածով հաստատված մատյանում՝ հետագա կանխարգելման աշխատանքները շարունակելու նպատակով:

6. Համայնքային ոստիկանության տարածքային ստորաբաժանման ծառայողն անչափահասների կողմից և անչափահասների նկատմամբ կատարվող հանցագործությունների և իրավախախտումների ընդհանուր կանխարգելմանն ուղղված աշխատանքների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի 2024թ. դեկտեմբերի « 09 »
N 25 - Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ս Տ Ի Կ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(ոստիկանության տարածքային մարմնի անվանումը)

Մ Ա Տ Յ Ա Ն

անչափահասների միջանձնային հարաբերությունների
պարզաբանման դեպքերի կանխման աշխատանքների գրանցման

Սկսված է « » ..... 20 թ.
Ավարտված է « » ..... 20 թ.
Թերթերի քանակը .....
Պահպանման ժամկետը .....
Հիմք: Հրաման ..... կետ .....

Հ/Հ	**Միջանձնային հարաբերությունների պարզաբանման կողմ հանդիսացող անչափահասներ** (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարեթիվ և բնակության հասցե)	**Կրթական հաստատության անվանումը**	**Ծագած խնդրի մանրամասն նկարագրությունը** (ստացված տեղեկատվության աղբյուրի նշմամբ)	**Անչափահասի փաստացի բնակության վայրի ոստիկանության տարածքային ստորաբաժանում փոխանցված տեղեկատվություն**
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				

Տեղեկանք կատարված աշխատանքների մասին

Կազմեց՝ պաշտոն, կոչում, Ա.Ա.Հ

« » _____20 թ.